ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

ի պատասխան Ձեր 10.04.2026թ. հ.106-2026թ. գրության՝ տեղեկացվում է.

Ավան վարչական շրջանի Դուրյան թաղամասի հ.35 շենքի տանիքը գտնվում է բավարար վիճակում, վերանորոգվել է 2025 թվականին, խնդիրներ առկա չեն:

Բրյուսովի թաղամասի հ.65 շենքի տանիքի ընթացիկ նորոգման աշխատանքները ներառված են կառավարման մարմնի 2026 թվականի ծրագրում:

Հ. Հովհաննիսյան թաղամասի հ.24/3 շենքի տանիքը հիմնանորոգվել է 2024 թվականին: Վերջին անձրևների ժամանակ կաթոցներ են նկատվել վերջին հարկի բնակարաններից մեկում և տանիքի ընթացիկ նորոգման աշխատանքները ներառվել են 2026 թվականի շենքի կառավարումն իրականացնող համատիրության ծրագրում :

Հ. Հովհաննիսյան թաղամասի հ.26/1 շենքի տանիքը գտնվում է նորմալ վիճակում: Վերջին անձրևների ժամանակ կաթոցներ են նկատվել վերջին հարկի բնակարաններից մեկում և տանիքի ընթացիկ նորոգման աշխատանքները ներառվել են 2026 թվականի շենքի կառավարումն իրականացնող համատիրության ծրագրում:

Հ. Հովհաննիսյան թաղամասի հ.27 շենքի վերջին հարկի բնակարաններից մեկում վերջին անձրևների ժամանակ կաթոցներ են նկատվել և տանիքի ընթացիկ նորոգման աշխատանքները ներառվել են 2026 թվականի շենքի կառավարումն իրականացնող համատիրության ծրագրում:

Ինչ վերաբերում է Դուրյան թաղամասի հ.33 և հ.36 շենքերի կոյուղատար համակարգերի և դիտահորերի խնդրին, տեղեկացվում է, որ 2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի (բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի) պատասխանատվության ներքո:

Երևանի քաղաքապետարանի 2025թ. աշխատանքային ծրագրերով իրականացվել է Դուրյան թաղամասի հ.31 շենքից հ.33 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ, իսկ Երևանի քաղաքապետարանի 2026թ. աշխատանքային ծրագրերով Դուրյան թղամասի հ.36 շենքի կոյուղատար համակարգի կառուցման/վերակառուցման աշխատանքներ նախատեսված չեն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ